# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Ք. Երևան, 4 փետրվարի 2020 թվական

**Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ**

***Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցել են՝***

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի անդամ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան – <<Իրազեկ և պաշտպանված սպառող>> ՀԿ ղեկավար (խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ կառավարման խորհրդի անդամ (խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան - ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (խորհրդի անդամ)

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2019 թվականի հաշվետվությանը

---

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

*1) Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2019 թվականի հաշվետվությանը:*
*2) Տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ տեսչական մարմնի 2019 թվականի հաշվետվությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին և հրապարակել տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում:*

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող 2020 թվականի գնումների պլանում հոդվածային և ներհոդվածային փոփոխությանը

---

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

1) Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող 2020 թվականի գնումների պլանում հոդվածային և ներհոդվածային փոփոխությանը:
2) Տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի կատարումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ